ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐ
11-րդ դասարան (տևողությունը՝180 րոպե)

Սիրելի՛ աշակերտ, օլիմպիադայի հարցաշարը միտված է բացահայտելու յուրաքանչյուրիդ ստեղծագործական կարողությունները և ինքնուրույն վերլուծական ունակությունները: Գրականության կախարդական աշխարհում բացահայտի՛ր քո աշխարհը: Եղի՛ր ազատ, անկաշկանդ. մտքերդ ձևակերպի՛ր կապակցված, հստակ և հասկանալի:
Այսօրվա քո հաղթանակը նվիրվում է սրբադասված զոհերի՝ Ծիծեռնակաբերդում թևածող հոգիների հիշատակին:
Հաջողությո՛ւն և հաղթանա՛կ:

Հանձնաժողովի նախագահ՝ Ս.Աբազյան

1.Ո՞վ է «Ցեղին սիրտը» Ժողովածուի հեղինակը. ե՞րբ է լույս տեսել. ո՞ր բանաստեղծություններն են բնաբանի դեր կատարում: Ի՞նչ բնաբան ունի այդ բանաստեղծություններից մեկը. որտեղի՞ց է վերցված, ինչո՞ւ: Գրի՛ր քեզ դուր եկած վեցատողը և մեկնաբանի՛ր: Ինքդ գրի՛ր մի քառատող՝ ձոնելով հայ նորօրյա հերոսներին:

5մ.

2.Ո՞վ է«աշնան և թախծի երգիչը». ե՞րբ է գրվել «Հրաժեշտի գազելը». որտե՞ղ է այն առաջին անգամ կարդացել հեղինակը, և ի՞նչ տպավորություն է թողել:
Նմանություններ գտի՛ր այլ հեղինակների նմանատիպ գործերի հետ՝ գրելով համապատասխան տողեր(նշի՛ր հեղինակներին):

5մ.

3.Գրի՛ր գարնանը նվիրված որևէ բանաստեղծություն(ցանկացած հեղինակի) և ներկայացրո՛ւ քո զգացումները՝ելնելով բանաստեղծության տրամադրությունից:

5մ.

4.Գրի՛ր «Հին աստվածներ» դրամայի մասին: Ո՞ր կերպարներում է երևում հոգու և մարմնի պայքարը: Նկարագրի՛ր նրանցից որևէ մեկին: Կա՞ պարտություն այս դրամայի հերոսների ներաշխարհում: 5մ.

Հանձնաժողովի նախագահ՝ /Ս.Աբազյան/